ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№Է/40/1326-23 առ «27» 06 2023թ.

«Ինչեյփ» ՍՊԸ
տնօրեն
Լ. Իսրայելյանին

(№ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/22-5-01/022 պայմանագիրը միակողմանի լուծման մասին)

Հարգելի՛ տիկին Իսրայելյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռելեների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ և «Ինչեյփ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի փետրվարի 8-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/22-01/022 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի անբաժան մաս կազմող հավելված 2-ով (մատակարարման ժամանակացույց) ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանված «պայմանագրի կնքման օրվանից 100 օրացուցային օրվա ընթացքում»: Սակայն մինչ օրս Պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքները Ձեր կողմից մատակարարված չեն (հիմք՝ պատասխանատու ստորաբաժանման ս/թ հունիսի 20-ի թիվ 3176 զեկուցագիր):

Պայմանագրով սահմանված է.

- 1.1 կետ՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք) ...»:
- 2.1.7 կետ՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի,

- 2.4.1 կետ՝ Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

Հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները՝ տեղեկացնում եմ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է (մասնակի) «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Ինչեյփ» ՍՊԸ-ի միջև 2023 թվականի փետրվարի 8-ին կնքված №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/22-01/022 պայմանագիրը՝ 14-րդ և 15-րդ չափաբաժինների մասով, և առաջարկում եմ ծանուցվելու օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել պայմանագրի և որակավորման ապահովումները՝ համաձայն «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-214/22» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 10.6 կետի:

Հարգանքով՝

ԳՏՏ-ԸՀԳՏ Ս. Մաթևոսյան

Կազմեց՝
Հ. Ռամազյան
ԳԸԲ գլխավոր մասնագետ
Հեռ. 010-20-04-91